ՀԱՅԿ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
HAYK YENGIBARYAN

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1921-1936)

Խորհրդային տարիների զանգվածային հայրենադարձության գործընթացը հայ պատմագիտության մեջ ընդունված է բաժանել երեք փուլերի՝ 1921-1936, 1946-1948 և 1962-1980-ականներ, որոնք հիմնականում կապված են տվյալ ժամանակահատվածներում իրականացված ներգաղթի քաղաքականության հետ:

1920-ական թվականների սկզբին մինչ Խորհրդային Հայաստանը, տիրում էին սարսափելի ծանր պայմաններ. սով, ավերակ գյուղեր ու քայքայված քաղաքներ՝ ամենուրեք լի գաղթականներով: Հայաստանը լցված էր Արևմտյան Հայաստանից՝ Բայազետից, Վանից, Ալաշկերտից, Բիթլիսից, Մուշից, Սվազից, անգամ Կիլիկիայից ու Պարսկաստանից եկած գաղթականներով: 1920 թվականին Թուրքիայի կողմից գրավված Կարսի, Կաղզվանի ու Սուրմալուի շրջանների բնակչությունը գրեթե ամբողջությամբ գտնվում էր Խորհրդային Հայաստանում: Երկրում կուտակված արևմտահայ գաղթականության թիվը անցնում էր 200 հազարից, ավելացրած նաև տասնյակ հազարավոր որբ ու անապատան երեխաների զանգվածը[1]:

Սկզբնական շրջանում բավականին դիմումներ են ստացվում հատկապես Միջագետքում (Իրաք) ապաստանած հայ տարագիրներից, որոնք գտնվում էին ահավոր ծանր պայմաններում: Նրանք հիմնականում Վասպուրականի հայերն էին, որոնք թուրքերի հարձակումներից խուսափելու համար 1918 թվականին փորձում են անցնել Արևելյան Հայաստան, սակայն թուրքերը փակում են Վան-Իգդիր ճանապարհը և նրանք, ստիպված, բազմաթիվ տառապանքների ու զոհերի գնով հասնում են Իրան՝ հույս ունենալով այնտեղից տեղափոխվել Հայաստան: Հայերի այս ցանկությունը ևս չի հաջողվում, քանի որ թուրքերը, ավելի վաղ մտնելով Իրան, փակել էին Այսրկովկաս տանող ճանապարհը: Գաղթական վասպուրականցիները, ինչպես նաև նրանց միացած Խոյի, Սալմաստի, Ուրմիայի հայերն ու նեստորական ասորիները, ստիպված

[1] < Մելիքսեթյան, Սովետական իշխանության առաջին քայլերը հայ գաղթականության հարցի լուծման ուղղությամբ (1921-1922), «Տեղեկագիր» ՀԳԱ (հասարակ. գիտ), 1960, թիվ 3, էջ 4:

շարժվում են դեպի հարավային Իրան[2]: 1918 թվականի հունիսի վերջերին Իրանում գտնվող անգլիացիները հայերին վերցնում են իրենց հովանավորման տակ՝ խոստանալով հետագայում տեղափոխել Հայաստան, սակայն, Միջագետք հասնելուց հետո, անգլիական իշխանությունները, չկատարելով իրենց խոստումը, անմիջապես զինաթափ են անում գաղթականությանը պաշտպանող հայկական ու ասորական զինված ջոկատները, այնուհետև, պահելով նրանց փշալարերով շրջապատված վրանային ճամբարում, տղամարդկանց օգտագործում են որպես ծրի աշխատուժի[3]:

1919 թվականին ամռանը վերջապես հայ գաղթականներին հաջողվում է կապ հաստատել Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ և նրան ներկայացնել իրենց ծանր վիճակը: 1919 թվականի հուլիսի 9-ին Կաթողիկոսը այս մասին հայտնում է Առաջին Հանրապետության կառավարությանը, սակայն կառավարությունը պատասխանում է, որ ներգաղթը առայժմ հնարավոր չէ: Միայն 1921 թվականից է հնարավոր լինում նրանց մաս-մաս տեղափոխել Հայաստան՝ տեղավորելով հիմնականում Ալեքսանդրապոլի, Բասարգեչարի (այժմ՝ Վարդենիս), Ղամարլուի (այժմ՝ Արտաշատ), Վեդու շրջաններում:

Այսպիսով, 1918-1920 թթ. հանրապետությունից ժառանգություն մնացած հոծ գաղթականության հետագա ներհոսքն այլևս կորցնելու էր իր տարերային բնույթն ու խորհրդային իշխանությունների սառնասիրտ հսկողության ներքո մտնելու էր մի պլանավորված, կազմակերպված հունի մեջ:

Միջագետքահայերի՝ Խորհրդային Հայաստան ներգաղթելուց հետո սփյուռքահայ համայնքներում աշխուժանում են հազարավոր մարդկանց Հայաստան ներգաղթելու ձգտումները: Նորանոր դիմումներ ու խնդրագրեր են գալիս Հայաստան: Այդպիսի տրամադրություններն ու ցանկությունները հետզհետե ավելի են ուժգնանում և տարածվում ողջ սփյուռքով, և, չնայած բազմաթիվ դիմումներին, այնուամենայնիվ, խորհրդային կառավարությունը 1923 թ. կարողացավ կազմակերպել մոտ հազար հոգու ներգաղթը[4] Վանից, Իրանից և

---

[2] Հ. Սելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980թթ.), Երևան, 1985, էջ 74.

[3] Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Էլչիբեկյան, Վասպուրականի հայերը Միջագետքում և նրանց վերադարձը Սովետական Հայաստան, «Տեղեկագիր» ՀԳԱ (հասարակ. գիտ), 1949, թիվ 2, էջ 17-26:

[4] Հարկ է նշել, որ ըստ Համլետ Սարգսյանի, 1923 թվականին Վանից, Պարսկաստանից ու շրջակա վայրերից խորհրդային Հայաստան են ներգաղթել շուրջ 100 մարդ, չնայած թվային այսպիսի անհամաձայնությունը, կարող է լինել ուղղակի վրիպակ: Տե՛ս Հ. Սարգսյան, Արևմտահայերի գաղթը Արևելյան Հայաստան 1915 թվականից հետո, էջ 18, http://www.armin.am/images/menus/549/H_Sargsyan.pdf:

այլ վայրերից[5]: Ներգաղթածները գտնվում էին տնտեսական ծանր վիճակում և անհրաժեշտ էր նյութական օժանդակություն ցուցաբերել նրանց, թեև այդ օգնության կարիքը զգում էին նաև հանրապետությունում եղած արևմտահայ գաղթականները ևս: Երկրի տնտեսական ծանր վիճակն էր հիմնական պատճառը, որ խորհրդային իշխանությունները չէին ստանձնում առավել մեծաքիվ ներգաղթ կազմակերպելու ծրագիր, չնայած, որ ներգաղթել ցանկացողների պակաս չկար:

1923 թվականի դեկտեմբերի 4-ին Անդրֆեդերացիայի ժողկոմի փոխնախագահ, Հայաստանի ժողկոմխորհի նախկին նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը, Խորհրդային Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների 3-րդ համաժողովում, անդրադառնալով Հայաստան ներգաղթելու խնդրին, նշում է, որ հայ գաղթականները նախ պետք է փոխեն իրենց քաղաքական ուղղությունը, պետք է հեռանան դաշնակցությունից և միանան Խորհրդային Հայաստանի աշխատավորությանը: Մյասնիկյանն ասում է, որ կընդունեն հայ գաղթականներին, միայն թե նրանք պետք է գան իրենց միջոցներով[6]: Այս առումով Խորհրդային Հայաստանին մեծ օգնություն է ցուցաբերում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ)՝ 1924 թվականին սեփական միջոցներով Հայաստան տեղափոխելով 250 որբերի: Այդպիսով, սփյուռքահայությունն՝ ի դեմս ՀԲԸՄ-ի, դառնում է ներգաղթը կազմակերպող երկու կողմերից մեկը՝ ստանձնելով տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը:[7]

Հարկ է նկատել, որ խորհրդային իշխանությունները որևէ կերպ չեն ցանկանում հարաբերվել սփյուռքում գործող ինչպես քաղաքական կուսակցությունների, այնպես էլ, հաշվի առնելով իշխանությունների հակակրոնական ու հակաեկեղեցական դիրքորոշումը, հայ առաքելական եկեղեցու հետ: Այս առումով խորհրդային իշխանությունների հիմնական գործընկերներ համարվում են բարեգործական կազմակերպություններն ու անհատ քաղաքացիները: ՀԲԸՄ, Պողոս Նուբարի նախաձեռնությամբ, հովանավորում է ներգաղթի հետ կապված ծախսերը: Գաղթականներին տեղափոխելու համար հայ համայնքները սկսում են կազմակերպել հանգանակություններ:

---

[5] Հ. Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980թթ.), Երևան, 1985, էջ 87: Կամ՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 30/116, ց. 1, գ. 2352, թ. 23:
[6] «Հայաստանի կոչնակ», 1924, համար 5, էջ 151: Կամ էդ. Մելքոնյան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Պատմություն, Երևան, 2005, էջ 204-205:
[7] էդ. Մելքոնյան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Պատմություն, Երևան, 2005, էջ 205:

1921 թվականի սեպտեմբերին ստեղծվում է Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ), որը պետք է օժանդակեր ներգաղթի կազմակերպման աշխատանքներին, հայրենիքի և սփյուռքի միջև կապերի զարգացմանը, ինչպես նաև հանրապետությունում կուտակված արևմտահայ գաղթականներին օգնություն ցուցաբերեր: ՀՕԿ-ի հիմնադիր անդամների թվում էին հասարակական, քաղաքական գործիչներ, մտավորականներ՝ Ս. Կասյանը, Ս. Համբարձումյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ար. Երզնկյանը, Դ. Շահվերդյանը, Ս. Փիրումյանը, Ս. Մարտիկյանը, Հովհ. Թումանյանը, Նար-Դոսը, Դ. Դեմիրճյանը, Մ. Սարյանը, Եղ. Թադևոսյանը, Ռ. Մելիքյանը, Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Լեոն, Ստ. Մալխասյանը, Վ. Արծրունին, Գր. Չուբարյանը և ուրիշներ:

ՀՕԿ-ի հիմնական նպատակներից մեկը սփյուռքահայերի շրջանում քարոզչական աշխատանքներ տանելն էր՝ Խորհրդային Հայաստանի մասին տեղեկություններ հաղորդելու և հայրենիքի հետ նրանց կապերը զարգացնելու իմաստով: Կոմիտեի պատվիրակները հայկական համայնքներում Խորհրդային Հայաստանի մասին պատմում էին միայն վառ գույներով, մինչդեռ Հայաստանում իրական վիճակն այլ էր:

Հատկանշական է ՀՕԿ-ի կենտրոնական վարչության կողմից 1921 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՕԿ-ի առաջին նախագահ, բանաստեղծ Հովհ. Թումանյանի գլխավորած պատվիրակության այցը Կ. Պոլիս, որտեղ նրանց հաջողվում է կապեր հաստատել 1920 թվականի հոկտեմբերին ստեղծված Հայաստանի օգնության մարմնի (ՀՕՄ) հետ, որը բացի Կ. Պոլսի կենտրոնական գրասենյակից մասնաճյուղեր ուներ նաև Ռումինիայում, Բուլղարիայում և այլուր: ՀՕՄ-ի նպատակն էր նյութական ու բարոյական օժանդակություն ցուցաբերել Հայաստանին, ինչը ՀՕԿ-ի համար շատ շահեկան էր: 1924-1925 թվականների ընթացքում ՀՕԿ-ին հաջողվում է իր մասնաճյուղերն ունենալ Մերձավոր արևելքի, Բալկանների, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների հայ համայնքներում:

ՀՕԿ-ը իր առջև նպատակ էր դրել ուսումնասիրել և հայտնաբերել Թուրքիայից գաղթելուց առաջ եվրոպական բանկերում ի պահ տված հայերի գումարները, հարստությունները, կտակներն ու նվիրատվությունները: Այդ հարցերով զբաղվում էր ՀԽՍՀ ժողկոմխորհին կից ստեղծված կտակների ուսումնասիրության հանձնաժողովը: Հայաստանին կտակված գումարների վերաբերյալ համաձայնագիր կնքելու համար 1924 թվականին արտասահման

է մեկնում ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահ Ա. Երզնկյանը[8]: Նա լինում մի քանի հայաշատ երկրներում՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Անգլիայում, հանդիպումներ ունենում սփյուռքահայերի հետ, ծանոթանում հայ տարագիրների ու որբերի խնդրին, ինչպես նաև հանդես է գալիս Խորհրդային Հայաստանի մասին զեկուցումներով ու ելույթներով:

ՀՕԿ-ը իր մասնաճյուղերի, արտասահմանյան պատվիրակների միջոցով գովերգում էր Խորհրդային Հայաստանը, ցուցադրում նրա մասին պատմող շարժանկարներ, կազմակերպում ցուցահանդեսներ և այլն: ՀՕԿ-ի պատվիրակները ամենուր հանդես են գալիս Հայաստանի նվաճումների և ՀՕԿ-ի հետագա քայլերի մասին դասախոսություններով:

Այսպիսով, հայրենադարձության իրականացման գործում նշանակալի մասնակցություն են ունենում ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը ու նրա արտասահմանյան մասնաճյուղերը: ՀՕԿ-ի նախաձեռնությամբ 1933 թվականին Փարիզում ստեղծվում է ներգաղթի և բնակարանային շինարարության ֆոնդ, որի կենտրոնական մարմնի կազմում ընդգրկված են եղել Արշակ Չոպանյանը, Ավետիք Իսահակյանը, ով այդ ժամանակ գտնվում էր Փարիզում և ուրիշներ: ՀՕԿ-ի մասնաճյուղերի շնորհիվ հսկայական գումարներ նվիրաբերվեցին և հատկացվեցին ներգաղթի իրականացմանը և հայրենադարձների համար բնակարանների կառուցմանը[9]:

1924-1925 թվականներին Հունաստանից, Միջագետքից ու Կ. Պոլսից Հայաստան են ներգաղթում 10 հազար մարդ: Միջագետքից ու Կ. Պոլսից ներգաղթած հայերին հիմանականում տեղավորում են Երևանի ու Լենինականի գավառական գյուղերում:

Հարկ է նկատել, որ միայն 1925 թվականին Բաթում և Զուլֆա նավահանգիստներով Հայաստան են ներգաղթում 5016 մարդ, այդ թվում Հունաստանից 1098 ընտանիք, կամ 3651 մարդ, Կ. Պոլսից 201 ընտանիք, կամ 780 մարդ, Բաղդադից, կամ ընդհանրապես Միջագետքից 160 ընտանիք՝ 385 մարդ,[10] որոնք հիմնականում բանվորներ ու արհեստավորներ են: Այս գործում իր

---

[8] Ա. Ստեփանյան, XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Երևան 2010, էջ 54:

[9] Հ. Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980թթ.), Երևան, 1985, էջ 157:

[10] Հ. Սարգսյան, Արևմտահայերի գաղթը Արևելյան Հայաստան 1915 թվականից հետո, էջ 18, http://www.armin.am/images/menus/549/H_Sargsyan.pdf.

օժանդակությունն է բերում ՀԲԸՄ՝ ներգաղթող հայերին Հայաստան տեղափոխելու համար հատկացնելով 5 հազար անգլիական ռուբի[11]:

1925 թվականի ՀԽՍՀ կենտգործկոմի որոշմամբ արտասահմանից ներգաղթող ընտանիքները 3 տարով ազատվում են ցանկացած տեսակի հարկերից, ինչպես նաև օգտվում են առանց մաքսի և վարձի բեռների փոխադրության վերաբերյալ ԽՍՀՄ աշխատանքի և պաշտպանության խորհրդի 1923 թվականի օգոստոսի 16-ի որոշման ընձեռած արտոնություններից:

Ըստ Հ. Մելիքսեթյանի կազմած աղյուսակի, որտեղ համադրված են տարբեր աղբյուրների տվյալներ, 1921-1925 թվականների ընթացքում արտասահմանից ներգաղթածների թիվը կազմում է 19.688 մարդ, կամ 4501 ընտանիք[12]: Այս հաշվարկներում արտացոլված չեն արտասահմանից անհատական վիզաներով, առանձին ընտանիքներով կամ խմբերով եկած շատ հայրենադարձներ, որոնց թիվը կազմում է 4-5 հազար, ինչպես նաև խորհրդային մյուս հանրապետություններից Հայաստան տեղափոխվածները: Անդրադառնալով սույն խնդրին՝ Գ. Շառոյանը նշում է, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը, իր ուշադրությունն ու հնարավորությունները կենտրոնացնելով արտասահմանում դեգերող հայ գաղթականների հայրենադարձության վրա, կարողանում է 1920-ական թվականներին արտասահմանյան տարբեր երկրներից ընդունել ավելի քան 26 հազար ներգաղթող հայերի[13]:

1926 թվականին ՀԽՍՀ ժողկոմխորհը ժամանակավորապես դադարեցնում է զանգվածային հայրենադարձությունը, որը հիմնականում կապված էր երկրում տիրող ծանր պայմանների, գաղթականներին հողով, բնակարանով ապահովելու դժվարությունների հետ: Այս ամենին նպաստում է նաև Շիրակի ավերիչ երկրաշարժի հետևանքով ստեղծված ծանր կացությունը:

Չնայած սփյուռքահայերի հայրենադարձությունը դադարեցնելու խորհրդային իշխանությունների որոշմանը՝ 1926 թվականին և հետագա տարիներին՝ մինչև 1928 թվականը, շարունակվում է անհատական դիմումներով հայերի ներգաղթը Հունաստանից, Կ. Պոլսից ու Միջագետքից:

1927 թվականին Հունաստանից և Պոլսից ՀԲԸՄ աջակցությամբ իրականանում է 1600 գաղթականների ներգաղթը Հայաստան:

---

[11] Էդ. Մելքոնյան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Պատմություն, Երևան, 2005, էջ 206:

[12] Հ. Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980թթ.), Երևան, 1985, էջ 105:

[13] Գ. Շառոյան, Հայրենադարձներին հողով ապահովելու խնդիրը 1920-ական թվականներին, «Լրաբեր» ՀԳԱ (հասարակ. գիտ), 1973, թիվ 2, էջ 6:

1931 թվականի օգոստոսի 10-ին Հայաստանի կառավարությունը ընդունում է «ՀԽՍՀ սահմանները արտասահմանի աշխատավոր հայերի մասսայական նոր ներգաղթ արտոնելու մասին» որոշում,[14] որով, փաստորեն, սկսվում է ներգաղթի մի նոր ալիք:

ՀԽՍՀ ժողկոմխորհին առընթեր ստեղծվում է ներգաղթի հատուկ հանձնաժողով Ա. Երգնկյանի գլխավորությամբ, որը պետք է սահմաներ ներգաղթողների թիվը, ընդունման ժամկետները, բնակեցման վայրերը: Այսինքն, պետք է զբաղվեր ներգաղթի հետ կապված բոլոր հարցերով:

Պետք է նշել, որ 1932-1933 թվականների ընթացքում Հունաստանից, Բուլղարիայից և Ֆրանսիայից Խորհրդային Հայաստան են ներգաղթում մոտ 8007 մարդ, իսկ 1936 թվականին իրականացվում է 1800 ֆրանսահայերի ներգաղթը Ֆրանսիայից, որի կազմակերպման աշխատանքներին կրկին օժանդակում է ՀԲԸՄ՝ տրամադրելով 2000 անգլիական ոսկի[15]:

1932-1933 թվականների ընթացքում ևս 6926 մարդ ներգաղթել է անհատական ճանապարհով: Այդ տարիներին ներգաղթածների մեծամասնությունը ֆրանսահայեր էին, որոնք հիմնականում բարձրակարգ մասնագետներ ու բանվորներ էին: Այդպիսով հայրենադարձված որակյալ մասնագետները մեծապես նպաստում են երկրի տնտեսական կյանքի վերելքին:

Ամփոփելով 1921-1936 թվականների ընթացքում տեղի ունեցած հայրենադարձությունը՝ պետք է ասել, որ այդ ընթացքում՝ ըստ Հ. Մելիքսեթյանի, հայրենիք են վերադարձել մոտ 42.286 մարդ, որը, կարելի է ասել, որ մոտավորապես համապատասխանում է ՀՍՍՀ արտգործժողկոմի կողմից 1944 թվականի նոյեմբերին կազմված տեղեկանքի տվյալներին[16]:

1936 թվականին երկրում տիրող ներքին քաղաքական լարվածության պատճառով ընդհատվում է ներգաղթը և Հայաստան - Սփյուռք հարաբերությունները դրվում են խիստ վերահսկողության տակ, գաղթականները համարվում են «վտանգավոր» տարրեր, երկրում ստեղծվում է անվստահության ու կասկածի մթնոլորտ: Վերջապես 1937 թվականին խզվում են Սփյուռքի հետ բոլոր կապերը՝ այն համարելով գաղափարապես օտար, իսկ Խորհրդային Միությանը մեծ օգնություն ցուցաբերած ՀՕԿ-ի գործունեությունը դադարեցվում

---

[14] **«Խորհրդային Հայաստան», 20 օգոստոսի, 1931 թ., համար 194:**

[15] **էդ. Մելքոնյան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Պատմություն, Երևան, 2005, էջ 215:**

[16] **Հ. Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980թթ.), Երևան, 1985, էջ 115:**

է, նրա ղեկավարներն ու անդամները մեղադրվում են լրտեսության, հակահեղափոխական գործունեության մեջ:

Այսպիսով, իջնում է «երկաթե վարագույրը»՝ վերջնականապես վերացնելով Սփյուռքի հետ բոլոր կապերը: Ներգաղթյալներից շատերը, տեղացիների հետ կիսելով բազմաթիվ դժվարություններ, 1937 թ. ենթարկվում են բռնաճնշումների՝ դատապարտվելով տարատեսակ անիրական մեղադրանքներով:

Ամփոփելով 1921-1936 թթ. ներգաղթի պատմության քննությունը՝ պետք է ասել, որ, ի տարբերություն գալիք 1946-1948 թթ. Մեծ հայրենադարձության, առաջին փուլում հայրենադարձությունը բացարձակապես կրում էր կամավոր բնույթ, ներգաղթողների դիմումների, ցանկությունների հիման վրա, իսկ պետությունը, ելնելով իր հնարավորություններից և սոցիալ-քաղաքական նպատակադրումներից, կանոնավորում և սահմանափակում էր այդ ներգաղթը: Եղածն էլ համապատասխանեցնում էր ներգաղթին նպաստող կազմակերպությունների ցուցաբերած նյութական օժանդակության հետ:

Այսինքն, խորհրդային պետությունը ոչ թե հայրենադարձության կոչ էր անում և կազմակերպում ներգաղթ, այլ դրսից եկող կամավոր ներհոսքի պարտադրանքով սահմանում էր ներգաղթողների տարեկան չափաքանակ և պլանավորում նրանց տեղավորումը:

Մյուս կողմից, 1921-1936 թթ. ներգաղթը տարբերվում էր նախորդից նրանով, որ 1918-1920 թթ. ներգաղթը յուրատեսակ շարունակությունն էր նախորդ տարիների խուռներամ և խուճապահար փախստականության՝ պատերազմի արհավիրքներից և եղեռնից բխող հասկանալի պատճառներով:

Եվ որքան էլ Առաջին հանրապետությունը փորձեր կարգավորել այն, միևնույնն է, կրում էր տարերային և անկազմակերպ բնույթ: Դրա համար էլ խորհրդային կարգերի ժամանակ կազմակերպված ներգաղթը առանձնացվում է իբրև խորհրդային հայրենադարձության առաջին փուլ:

The first phase of repatriation to Soviet Armenia (1921-1936)

The article studies the repatriation to Soviet Armenia (1921-1936), which is set aside as the first phase of repatriation to the Soviet Union. The article presents an overview of the repatriation of 1921-1936 in figures and according to countries, as well as discusses what steps the Soviet authorities took to organize and carry out repatriation and how they assisted in the efforts of the Armenian Relief Committee (HOK) to organize immigration.